պիսի մեծանուն ճարտարապետներ, ինչպիսիք էին Տրդատ Անեցին ու Մանվել Վասպուրականցին։

Այդ շրջանում հանդես եկան նաև Հայոց եկեղեցիների առաջին գավիթները, որոնք հետագայում ընդհանրացան և տարածվեցին ամբողջ Արևելյան Հայաստանում և միջնադարյան հայկական ճարտարապետության զարդը դարձան։

Թորամանյանն արդեն գիտե Անիի Բագրատունյաց վերջին թագավորներից մեկը հանդիսացող Հովհաննես Սմբատի Հոռոմոսում շինած ժամատունը, որի արձանագրության մեջ ասված է՝

«Ի ՆՁԷ (487=1038) թուականիս Հայոց եատու ես, Յովաննէս Շահանշահ, որդի Գագկա Շահանշահի, զիմ այգին, որ ի Կողբ՝ յիմ եկեղեցիս, ի սբ. Յովաննէս, զոր շինեցի ի վանս Հոռոմոսի հանդերձ ժամատամբս...»[1]։

Եվ եթե դրա վրա ավելացնենք նաև դրանից առնվազն 50 տարի առաջ շինած Սանահնի գավիթը՝ դարձյալ Բագրատունի թագավորների օրով, ինչպես նաև 996 թվականին Գնդեվանքում կառուցված գավիթը, որ մեջ է բերել Ճարտ. Ստ. Մնացականյանը, ապա կգանք այն եզրակացության, որ գավիթներն ու ժամատները, լինելով զուտ հայկական երևույթ (Թորամանյանի բառերն են), առաջ են եկել Արևելյան Հայաստանում, 10-րդ դարում և ոչ թե Փոքր Ասիայում կամ Կիլիկիայում (ինչպես ենթադրել է Թորամանյանը)։

Սանահնի այդ հնագույն գավիթը, որ քանդել են 1181 թվականին, նրա տեղում այժմ գոյություն ունեցող գավիթը շինելու ժամանակ, գրավոր տեղեկություններով հաստատվող, մինչև այժմ մեզ ծանոթ ամենահինն է հայկական ճարտարապետության մեջ։

* * *

Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ Հովհաննես-Սմբատ հայոց Բագրատունի թագավորը, գժտված լինելով Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հետ, նրան բանտ է դնում և Սանահնի առաջնորդ Դիոսկորոսին բերում ձեռնադրում է կաթողիկոս[2]։ Վարդան վարդապետը գրում է, որ Դիոսկորոսը կաթողիկոս է եղել ընդամենը մեկ տարի[3], բայց վերոհիշյալ երկու պատմագիրներից և ոչ մեկը Դիոսկորոսի կաթողիկոսության տարեթվի մասին ոչինչ չի ասում։ Դիոսկորոսը հիշատակված է հայոց ՆՁԷ=1038 թվականին Կարնո Շխնոց գյուղում գրված մի մագաղաթյա երկաթագիր ավետարանի հիշատակարանում, որտեղ Եվագրիս գրիչը հետևյալն է գրել նրա մասին.

«...Գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ իմով Եւագրիս մեղուցեալ և անարժան կրաւնաւորի, ի թուականութեան հայոց ՆՁԷ, ի հայրապետութեան տեառն Պետրոսի եւ զկնի նորա կենդանութեան նստաւ այլ հայրապետ, որ կոչի անուն նորա Դեոսկորոս և ի թագաւորութեանն Յունաց Միխայելի բարեպաշտի»[4]։

Դիոսկորոսի կաթողիկոսության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում և տարեթիվը նշում դեպքերին գրեթե ժամանակակից Մատթեոս Ուռհայեցին (11—12-րդ դդ.) իր ժամանակագրության մեջ։ Նա պատմում է, որ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը հայոց ՆՁԶ (486=1037) թվականին ծածկաբար գնում է Վասպուրական, որովհետև թագավորը, բոլոր նախարարներն ու հայոց ազատագունդ զորքը նրա պատվիրաններին ունկնդիր չէին լինում։ Նա Վասպուրականի Զորավանքում մնում է չորս տարի։ Հովհաննես թագավորն ու հայոց բոլոր նախարարները նենգաբար թուղթ են գրում կաթողիկոսին և երդումներով խոստանում են ունկնդրել նրա քրիստոնեական վարդապետություններին և հրամաններին։ Այդ գործին միջնորդում են նաև բյուզանդացի կողմնակալ իշխանները։ Պետրոս կաթողիկոսը հավատում է նրանց և վերադառնում է, բայց հենց Անի մտնելու միջոցին թագավորի հրամանով նրան ձերբակալում են և բանտարկում։

Այնուհետև թագավորը Անի է բերել տալիս Սանահնի առաջնորդ Դիոսկորոսին և

[1] Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 21։
[2] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի Վ. Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909, էջ 84։
[3] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 98։
[4] Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, 1951, Անթիլիաս, էջ 219։